

ՍՍՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ԲՈՒՍԱԲԱԴԱԳԻՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՊՈՊՈՒԼԱՐ ՄԵՐԻԱ

Պ. Գ. ՅԱ. ՌՈՇԵՆԴՅԱՆ

ՄԱՍՈՒԲԸ ՈՐՊԵՍ
ՎԻՑԵՎԻՆԻ ՀԱՐՈՒՏ ԱՂԲՅՈՒԹ

Ա. Ր. Ա. Ֆ. Օ. Ե. Ե. Բ. Ա. Տ. Ա. Կ. Զ. Ո. Խ. Փ. Յ. Յ. Ե. Կ.

ԵՐԵՎԱՆ

1943

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿՈՆ ԶԻԼԻԱԼ

ԲՈՒՍԱԲՈՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՊՈՊՈՒԼԱՐ ԱԵՐԻԱ

634.7:577.16


3-

Պ. Գ. ԸՆ.ՐՈՇԵՎԵՆՈ

ԱՅԼԻԳԿԱՆ Է 1961 թ.

ՄԱՍՈՒՐԸ ՈՐՊԵՍ
ՎԻՏԱՄԻՆԻ ՀԱՐՈՒՏ ՌԴԲՅՈՒԹ

16011
8964



ԱՐՄՖԱԿՆԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1943

Սերիա՝ խմբագրությամբ
Գիտուր. վաստկավոր զուծիչ Ա. Գ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

Պատ. խմբագիր՝ Զ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ

Ի՞նՉ Է ՎԻՏԱՄԻՆԸ

Առաջներում կարծում էին, որ եթե մարդու սննդի մեջ անհրաժեշտ քանակությամբ բոլոր մննդանյութերը (սպիտակուցաներ, ածխաջրեր և ճարպեր) կան, ապա օրգանիզմի նորմալ սննդի համար դա արդին բավական է. բայց հետազայում փաստերն այլ բան ցույց տվին: Օրինակ, հայտնի են դեպքեր, երբ մշտապես հեռավոր հյուսիսում բնակվողները հիվանդացել են ցինուակամ սկսրբությունուն կոչվող հատուկ հիվանդությամբ: Այս հիվանդությունն արտահայտվում է նրանով, որ մարմինի զանազան մասերից սկսում է արյուն հոսել, մարմինի վրա ուռուցքներ են առաջնում, լնդերը թուլանում են և ատամներն սկսում են թափվել: Եթե այս հիվանդությունը չբուժվի, ապա նա կարող է մարդուն մահվան հասցնել: Նկատված է, որ ցինգայով հիվանդներին հում մրգերով և բանջարեղենով կերակրելով կարիլի է բուժել: Ենելով զրանից, մարդիկ եկան այն եղրակացության, որ ցինգա հիվանդությունը հյուսիսում առաջանում է մրգերի և բանջարեղենի պակասությունից՝ հատկապես ձմեռվա ամիսներին: Չնայած նրան, որ մարդիկ բավարար քանակությամբ սպիտակուցներ, ածխաջրեր ու ճարպեր էին ընդունում, բայց որովհետեւ մրգեր ու բանջարեղեն չէին ուտում, ուտուի հիվանդանում էին ցինգայով: Պարզվեց նաև, որ ցինգայից բուժվելու համար անհրաժեշտ չէ մրգերն ու բանջարեղենն անպայման մեծ քանակությամբ գործածել: Բավական էր սննդի հետ սիստեմատիկաբար ընդունել մրգեր կամ բանջարեղեն, թեկուզ և փոքր քանակությամբ, և արդին հիվանդությունն անցնում էր:

Չինաստանում և Ճապոնիայում, հատկապես հնում, շատ տարածված էր չըերի-ըերի կոչված հիվանդությունը: Սա նույնպես շատ վտանգավոր հիվանդություն է և հաճախ մահվան է հասցընում: Պարզվեց, որ այս հիվանդությունն առաջանում է մշտապես միայն բրնձով սնվելուց: Հատկապես ուժեղ կերպով արտապես հայտվում էր «հղկված»: այսինքն արտաքին կեղեից լավ, խնամ-

քով մաքրված բրնձից: Երբ այսպիսի հիվանդներին սկսում էին կերակրել խոռոր սննդով, նրանք շատ արագ առողջանում էին:

Այս և շատ այլ փաստեր ցույց են տվել, որ մարդու սննդի համար միայն սպիտակուցները, ածխաջրերն ու ճարպերը բավական չեն, որ անհրաժեշտ են էլի ինչոր նյութեր, որոնք բավական է ընդունել շատ չնշին քանակություններով, բայց որոնք, այնուամենայնիվ, միանգամայն անհրաժեշտ են մարդու օրգանիզմի նորմալ գործունեության համար: Այդ նյութերն անվանվեցին «վիտամիններ»:

ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Վիտամինների շատ տեսակներ գոյություն ունեն, ըստ որում նրանցից յուրաքանչյուրն իր հատուկ ազդեցությունն է թողնում օրգանիզմի վրա: Սովորաբար վիտամինների տեսակներն ընդունված է նշանակել լատինական տառերով: Ամենից լավ ուսումնասիրվել են A, B, C և D վիտամինները:

Վիտամին A.—Պարունակվում է թարմ կարագի, կաթի, մսի և այլ կենդանական մթերքների մեջ: Բույսերի մեջ պարունակվում է նրա նման մի նյութ, որ կոչվում է կարոտին: Այս նյութն օրգանիզմի մեջ վեր է ածվում A վիտամինի, այնպես որ մարդու համար որպես A վիտամինի աղբյուր կարող են հանդիսանալ ինչպես կենդանական, այնպես էլ մի շարք բուսական մըթերքներ: Մեր գործածական բանջարեղենից մեծ քանակությամբ կարոտին պարունակվում է դագարի, տամատի (պամիղորի), կառնաչեղենի և այլ բանջարեղենի մեջ:

Սննդի մեջ A վիտամինի բացակայության կամ պակասության գեպքում մարդու մի շարք օրգանների գործունեությունը խախտվում է: Առաջանում են աչքի հիվանդություններ:

Վիտամին B.—Այս վիտամինն այժմ ստորաբաժանվում է մի շարք այլ վիտամինների՝ B₁, B₂ և այլն. B₁ վիտամինի հիմնական աղբյուրը հանդիսանում է սև հացը, որովհետև այդ վիտամինը գլխավորապես գտնվում է ցորենի արտաքին կեղենի մեջ: Սպիտակ ալյուրը պատրաստելիս ցորենի կեղեն անջատվում է, այդ պատճառով էլ սպիտակ հացի մեջ B₁ վիտամինի քանակը շատ պակաս է:

Այս վիտամինի բացակայության կամ պակասության գեպ-

քում առաջանում է վերը հիշված «բերի-բերի» հիվանդությունը, ինչպես նուև մի շարք այլ հիվանդություններ:

Վիտամին C.—Պաշտպանում է օրգանիզմը ցինգա հիվանդությունից, զբա համար էլ կոչվում է նաև հակացիթզային վիտամին: Այս վիտամինը պաշտպանում է մարդու մի շարք օրգանների աշխատանքը և ուժեղացնում է օրգանիզմի գիմացկունությունը մի շարք հիվանդությունների նկատմամբ:

C վիտամինը պարունակվում է գլխավորապես բուսական մթերքների մեջ, հատկապես մեծ քանակությամբ պարունակվում է մասրենու պտուղների, խաղողի տերենների և խակ ընկույզի մեջ:

C վիտամինի հատկությունների վրա մենք հետագայում կանգ կառնենք ավելի մանրամասն:

Վիտամին D կամ հակառախիտային վիտամին.—Հատկապես մեծ նշանակություն ունի երեխանների օրգանիզմի համար: Սա ապահովում է ոսկրընների նորմալ զարգացումը: Այս բացակայության դեպքում անաջանում է ռախիտ կոչվող ոսկրային հիվանդությունը: Այս վիտամինը մեծ քանակությամբ պարունակվում է ձկնու յուղի, թարթ կարագի, կաթի, ձվի գեղնուցի և այլ կենդանական մթերքների մեջ:

* * *

Անհրաժեշտ է նշել վիտամինների պակասության հետևանքով առաջացող երկու կարգի հիվանդություններ՝ ա) սուր կերպով արտահայտված հիվանդություններ, որոնք առաջանում են այս կամ այն վիտամինի լրիվ բացակայության, կամ խիստ պակասության դեպքում, և բ) թույլ արտահայտված հիվանդագին երկույթներ, որոնք առաջանում են այս կամ այն վիտամինն անհրաժեշտ քանակից քիչ գործածելու հետևանքով:

Սուր հիվանդություններից են, օրինակ, վերը հիշված ցինգան, բերի-բերին, ռախիտը: Ինչ վերաբերում է թույլ հիվանդագին երկույթներին, ապա զբանք արտահայտվում են շատ տարբեր ձևերով, այն է՝ ընդհանուր թուլություն, ախորժակի վատացում, զանազան հիվանդությունների (գրիպ, անդինա) դիմացրելու ընդունակության թուլացում, ատամների հաճախակի հիվանդություններ և այլն: Այս բոլոր երկույթներն էլ մեծ մասամբ առաջ են գալիս վիտամինների պակասությունից:

Վերջին ժամանակներս պարզված է, որ վիտամինների պակասությունը թուլացնում է նաև օրգանիզմի գիմադրական հատկությունն այնպիսի վարակիչ հիվանդությունների հանդեպ, ինչպիսին, օրինակ, տուբերկուլյոզն է:

Այս բոլորից պարզ երկում է, թե ինչպիսի ուշադրությամբ պետք է վերաբերվել վիտամիններին. Պետք է հետեւ որ ամբողջ տարին սննդի մեջ մտնեն կենդանական, ինչպիս նաև բուսական տարրեր մթերքներ: Պետք է նաև իմանալ որ տարրեր վիտամիններ տարրեր աստիճանի դիմացկունությունն ունեն ջերմաստիճանի բարձրացման, իոնավության, օդի աղդեցության և այլի նկատմամբ: Այդ պատճառով էլ սննդի վիտամինով հարուստ լինելը մեծ չափով կախված է նաև նրանից, թե ինչպիս է պատրաստվում և պահպանվում այդ սնունդը:

Վիտամինների հայտնագործումը տեղի է ունեցել 1912 թվին: Այն ժամանակից մինչև այժմ անցած 30 տարիների ընթացքում վիտամինների մասին ունեցած տեղեկությունները վեր են ածվել արդեն մի ամբողջ վիտության և արդյունաբերության մի բավականին մեծ ճյուղի:

Վիտամինների քիմիական կազմի, օրգանիզմի վրա նրանց ունեցած ազդեցության, նրանց կայունության և մի շարք այլ հարցերի ուսումնասիրությամբ զբաղվում են մեծ թվով մասնագետներ:

Մեղ մոտ՝ ՍՍՌՄ-ում գոյություն ունեն վիտամիններին վերաբերող հարցերով զբաղվող մի շարք խոշոր հիմնարկություններ, ինչպիս, օրինակ, Համամիութենական Գիտա-հետազոտական Վիտամինային ինստիտուտը, Վիտամինային արդյունաբերության Միութենական Վարչությունը (Սոյուզվիտամինպրոմ), կան մի շարք գործարաններ, որոնք վիտամինային կոնցենտրատներ են պատրաստում, ինչպիս նաև գործարաններ, որոնք արհետական ձևով որոշ վիտամիններ են ստանում:

Հայրենական պատերազմի պայմաններում, երբ պետք է հնարավորին չափ լրիվ կերպով օգտագործել մեր հումուրթը, բարելավել սննդի գործը և լավագույն ձևով պաշտպանել հիվանդություններից, — այս պայմաններում ուղղմանակատին և ընականությունը բավարար քանակությամբ վիտամին պարունակող սնունդ մատակարարելու գործը հատկապիս խոշոր նշանակություն է ստանում:

ՄԱՍՐԵՆԻՆ, ՆՐԱ ՏԱՐԱԾՈՒՄԸ, ՄԱՍՐԻ ՀԱՎԱՔԵԼԸ

Մասրենու պտուղները կամ մասուրը Ը վիտամինի ամենաշհարուստ աղբյուրներից մեկն է: Մասրենին անվանում են նաև վայրի փարզ: Երա կուլտուրական տեսակներն ու այլատեսակները, որոնք փարթամ ու բաղմաթերթիկ ծաղիկներ ունեն—պարտեղային վարդերի բաղմապիսի սորտերն են:

Ինչպես կուլտուրական վարդերը, այնպես էլ մասրենին պատկանում են բույսերի նույն ցեղին:

Մասրենիները շատ բազմատեսակ են, հայտնի են նրանց մի քանի հարյուր տեսակներ. և ավելի շատ այլատեսակներ:

Կովկասում աճում են մասրենու մոտ 25 տարրեր տեսակներ, իսկ Հայկական ՇՈՒՌ-ում՝ ավելի քան 10 տեսակ: Մեր բոլոր մասրենիները փոքր կամ միջին միծության թիկեր են, որոնց ճյուղները պատված են փշերով, շատ սակավ պատահում են տեսակներ, որոնք փշերից համարյա զուրկ են: Տերենիները բարդ են՝ կազմված 7—9 (երբեմն էլ ավելի) տերեկիներից: Ծաղիկներն ունեն 5 (սակավ գեղգերում՝ ավելի) սպիտակ կամ վարդագույն պսակաթերթեր, շատ քիչ պատահում են տեսակներ, որոնց ծաղիկները գեղին են: Պառագները օվալ են, ձվաձև, պտուկաձև, երբեմն նույնիսկ կլոր: Պազի ներքին պատերը հաճախ ծածկված են լինում կողչուն մազիկներով. պտուղներն անդգույշ ունենու դեպքում այդ մազիկները բերանում և կոկորդում բորբոքում են առաջանում:

Պտղի ներսում կան մանր պտղիկներ, որոնցից յուրաքանչյուրը բազկացած է արտաքին թաղանթից և սերմից: Պտուղները սովորաբար լինում են կարմիր կամ նարնջակույյն, սակայն մեզ մոտ հանդիպում են նաև մասրենիներ՝ սև կամ շագանակագույյն պտուղներով:

Մասրենիների ամենասիրած վայրերը լուսավոր, կազմու կամ բոխու-կաղնու անտառներն են, անտառների ու այգիների եղբերն ու բացատները, ինչպես նաև զանազան թփուտներ:

Հայկական ԱՄԲ-ում մասրենիներով հարուստ են բոլոր այն ուսունները, որտեղ կան անտառներ, կամ նրանց մնացորդները—թփուտներ: Ամենից շատ մասրենիները տարածված են մեր անտառային ուսուններում, ինչպես, օչինակ՝ կիրովականի, Ստեփանացանի, Դիլիջանի և Ղափանի ուսուններում: Մասրենի շատ կա

նաև Ապարանի ույլում, որտեղ աճում է ցածրահասակ կազմություններում:

Մասուրի պաշարը Հայաստանում մեծ է: 1942 թվին Հայկառավագիւղ նախագահ էր մթերել 100 տանն մասուր, սակայն այդ քանակը տարեցտարի կարելի է ավելացնել:

Մասրենին մեզ մոտ ծաղկում է սկսած մայիսի վերջերից մինչև հուլիսի վերջերը, Կայած թե աշխարհագրական բնչպիսի բարձրության վրա է գտնվում: Որքան վայրը ավելի բարձր է, այնքան մասրենին ավելի ուշ է ծաղկում:

Ճիշտ այդպես էլ տեղի բարձրության հետ փոխվում են նրա հասունացման ժամկետները: Երեանի շրջակայքում 1942 թվին մասրենու պատուղների հասունացման եռուն շրջանը հոկտեմբերի կեսերին էր, իիրովականում՝ հոկտեմբերի վերջերին, Ապարանից վերև գտնվող սարերում՝ նոյեմբերի սկզբներին, և այդու:

Հայկական ՍՄՌ-ում աճող մասրենու բոլոր տեսակներն ել պարունակում են C վիտամին: Միայն թե որոշ տեսակների մոտ այդ վիտամինի քանակը մեծ է, իսկ յուսների մոտ՝ փոքր: Այդ պատճառով էլ պատուղները հալվաքելու գործը կազմակերպելիս՝ ցանկալի է, որ վիտամինով հարուստ տեսակներն առանձին հավաքվեն, որպես առաջին սորտ, և չխառնվեն մյուսների հետ:

Բուսաբանական ինստիտուտի հետազոտությունները ցույց տվին, որ մեր մասրենիների՝ կորիզներից մաքրած, թարմ պտուղները պարունակում են 0,4-ից մինչև 1,2% վիտամին, իսկ ավելի հարուստ տեսակները՝ մինչև 3,2%: Սա նշանակում է, որ Հայաստանի մասրեների վիտամինով հարուստ տեսակների 100 գրամ մաքրած թարմ պտուղների մեջ պարունակվում է 3,2 գրամ, իսկ 1 կիլոգրամի մեջ՝ 32 գրամ վիտամին: Հստ որում սեսպութիկայի տարրեր սայոններից հավաքված բոլոր նմուշների հատազոտությունը ցույց տվեց, որ վիտամինով ամենից հարուստը Ապարանի ույլունի մասրեներն են: Այդ պատճառով էլ այս ույլունի մասրեների մթերման աշխատանքների վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել, մանավանդ որ այստեղ բավականին շատ մասուր կա: Այստեղ վիտամինով ամենահարուստ տեսակները տարածված են գլխավորապես Բուժական, Քիրաշըլու, Գյուլավիլու գյուղերի շրջակայքում, ինչպես նաև Արարագի լեռան լանջերում:

Ապարանի ռայոնում աճող հոմարյա բոլոր կարմրապտուզ մասրենիները վիտամինով հարուստ են. Այդ պատճառով էլ հավաքման ու մթերման ժամանակ կարմիր պտուղները ունեցող բոլոր թփերից հավաքված մասուրները կարելի է միացնել իրար՝ համարելով այն առաջին սորտ:

Ապարանի ռայոնում հանդիպում են նաև սեապտուզ մասրենիներ, սակայն գրանց պտուղները պետք է առանձին հավաքելը որպես երկրորդ սորտ:

Հարևան որոշ ռայոններում, ինչպես, օրինակ, Ախտայի ռայոնում, արդեն նույնիսկ կարմրապտուզ մասրենիների մեջ պատահում են ինչպես վիտամինով հարուստ, այնպես և աղքատ տեսակները. Այդ պատճառով էլ շատ ցանկալի է, որ մասուր մթերողները կարողանան այդ տեսակներն իրարից տարբերել: Բուսաբանական ինստիտուտն այդ ուղղությամբ ևս համապատասխան աշխատանք է տանում—նա ուսումնասիրում է այն կապը, որ գոյություն ունի մասրենու արտաքին տեսքի և նրա պըտուղների պարունակած վիտամինի քանակության միջև:

Մասուրի հասունացման հետ փոխվում է նաև վիտամինի քանակը պտուղների մեջ: Այս հարցն ուսումնասիրում է Համամիութենական Գիտահետազոտական Վիտամինային ինստիտուտը՝ Լենինգրադի Բուսաբանական այգում աճող մասրենիների վրա: Այդ հետազոտությունները ցուց են տվել, որ մասրենու պտուղների հասունացման զուգընթաց վիտամինի քանակն ավելանում է: Բայց հասունացման այն շրջանում, երբ պտուղները նարնջագույն և կարմիր են լինում, վիտամինի պարունակության տեսակիտից մոտավորապես նույն պատկերն է ստացվում: Այդ պատճառով էլ գործնականում մասուրը կարելի է հավաքել՝ հենց որ նրա գույնը կարմրում է, առանց սպասելու, որպեսզի լրիվ կերպով հասունանա, այսինքն փափկի: Նույնիսկ ավելի լավ է չսպասել մինչև պտուղների լրիվ հասունացումը, այլ մի քիչ ավելի շուտ հավաքել որովհետև շատ փափուկ պտուղները տեղափոխելու ժամանակ կարող են փչանաբներին պետք է մասուրը հավաքել այն ժամանակ, երբ պտուղներն սկսում են հասունանալ: Երկանում հավաքելու աշխատանքները կարելի է սկսել սեպակեմբերի վերջերից, Կիրովականում՝ հոկտեմբերի սկզբներից, ավելի բարձրագիր շրջաններում՝ ավելի ուշ: Պտուղները կարելի է ուղղակի ձեռքով հավաքել բայց ավելի լավ է մկրատով կարել, նրանց վրա փոքրիկ կո-

թուններ թողսելով: Այսպես հավաքելու դեսպում պտուղներն ավելի քիչ են փշանում և հավաքողի ձեռքերն էլ քիչ են փառվում փշերից: Լավ է հավաքել ոչ թե պարկերի, այլ զամբյուղների կամ գույլերի մեջ, որպեսզի պտուղները չճիւվին:

ՄԱՍՈՒՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Հայկական ՍՍԾ-ում մասուրի մթերման գործով զբաղվում են երկու կազմակերպություն՝ Հայկոսպը և Լիկրաստրեստի Հայաստանի զբասենյակը: Նրանք այդ մթերքը մատակարարում են գեղատներին, իսկ սրբեմն՝ նաև խանութներին:

Զնայած դրան, մեղ մոտ, այնուամենայնիվ, շատ քիչ մասուր է հանգում վաճառքի: Այդ պատճառով էլ ցանկալի է, որ բոլոր նրանք, ովքեր որևէ հնարավորություն ունեն, հատկապես կոլխոզները, ևս առավել դպրոցականները, տեղական սպառման համար իրենք զբաղվեն մասուրի մթերմամբ:

Բավական չէ միայն գիտենած թե նրանդ և երբ պետք է հավաքել մասուրը, պետք է կարողանալ նաև այն լավ պահպանել, որովհետև վիտամինն անկայուն նյութ է և ոչ ճիշտ պահելու գեպքում հեշտությամբ քայլայվում է:

Ը վիտամինը քայլայվում է զվարապես երկու պատճառով՝ ա) օդի երկարատև ազդեցությունից, և բ) մետաղների (պղնձի և երկաթի) հետ շփվելուց: Այդ պատճառով էլ Ը վիտամին պարունակող մթերքները պահելիս՝ պետք է զգուշանալ վերը հիշված այդ երկու պատճառների ազդեցությունից:

Պարզվել է, որ եթե մասրենու պտուղները բաց օգում դանդաղորեն չորացվում են, ապա նրանց մեջ վիտամինի քանակությունը խիստ կերպով ընկնում է: Իսկ եթե պտուղները չորացվեն արագ կերպով, ապա վիտամինի քանակը կարող է բոլորովին չփոփոխվել: Այդ պատճառով էլ խորհուրդ է տրվում մասրենու պտուղները չորացնել վառարաններում, ամենից լավ է ուստական վառարաններում, 35—40⁰ ջերմության մեջ: Չորացրած պտուղները պետք է պահել ամուր փակված ամաններում: Մետաղյա ամաններում պահել չի կարելի, իսկ եթե ուրիշ ամաններ չկան, ապա այդ մետաղյա ամանները պետք է լավ կլայիկած լինեն, կամ էմալով ծածկված: Պետք է պահել չոր և սառը տեղում, սակայն ջերմաստիճանն այնքան ցած չպետք է լինի, որպեսզի պտուղները չսառչեն, որովհետև սառած մթերքը հալվելու գեպքում վիտամինն արագորեն քայլայվում է:

Ճիշտ չորացնելու և պահելու դեպքում ժամբենու պառղները կարող են ամբողջ ձմեռը դիմանալ՝ վիտամինի շատ քիչ կուրուսով: Անհրաժեշտ է նշել նաև, որ պառղները պետք է չուրացնել բերքը հավաքելուց անմիջապես հետո: Ավելի լավ է պառղները չորացնել բերքահավաքի վայրից շատ մոտ տեղում, որովհետեւ տեղափոխությունների հետևանքով պառղների մեջ վիտամինի քանակությունը խիստ կերպով պակասում է:

ՄԱՍՈՒԹԻ ՕԴԱԳՈՐԾՈՒՄԸ

Առաջներում կարծում էին, որ C վիտամինը եփելու և ընդհանրապես ջերմաստիճանը մինչև 100-ի հասցնելու դեպքում լրիվ կերպով քայքայվում է: Պարզված է, որ վիտամինի քայքայումը տեղի է ունենում միայն ջերմաստիճանի դանդաղ, աստիճանական բարձրացման դեպքում: Եթե միանդամից ջերմաստիճանը բարձրացնում ենք մինչև 100-ի, ապա վիտամինի կայունությունը բոլորովին չի ընկնում, այլ ընդհակառակը, բարձրանում է:

Մասրենու պառղների օգտագործման ամենալազզ եղանակը, անային պայմաններում, եռման ջրով խաշելն է: Մասրենու թարմ կամ չորացրած պառղները սառը ջրով 2-3 անգամ պետք է լվանալ և մկրատով կիսել 2 մասի: Դրանից հետո պետք է լցնել թեյտանի մեջ (միայն ոչ մետաղյա) և խաշել եռման ջրով՝ այն հաշվով, որ մեկ բաժակ ջրին ընկնի 1-2 ճաշի գդալ կիսած պառղները: Խաշված պառղները 2-3 ժամ պետք է պահել փակված թեյտանում: Նախքան գործածելը պետք է այդ հեղուկը բամբակով կամ որեէ կտորով քամել, որպեսզի մաքրվի պառղի ներսից հեղուկի մեջ անցած մազմզուկներից: Այս ձևով պատրաստած լուծույթը մեկ օրից ավելի չի կարելի պահել:

Ավելի լավ է ոչ թե պառղները խաշել, այլ փակ ամանի մեջ 5-10 րոպե եփել և հետո 1-2 ժամ թողնել այդ փակ ամանում: Բայց այս դեպքում էլ պետք է պառղների վրա ոչ թե սառը ջուր լցնել այլ եռման ջուր, որովհետեւ աստիճանաբար տաքացնելու դեպքում վիտամինը քայքայվում է:

Օրական 1-2 բաժակ այդ լուծույթից գործածելն արդեն վիտամինի բացակայությունից կամ պակասությունից առաջացած բոլոր հիվանդագին երեսույթները վերացնում է: Այս հեղուկը շատ համեղ է և կարելի է գործածել թե որպես թարմա-

ցուցիչ խմիչք և թե տաք վիճակում, որպես թեյ: Մեծ քանակությամբ գործածելը բոլորովին վասա չէ: Հայաստանի որոշ շրջաններում այս հեղուկին ալյուր և շաքար ավելացնելով՝ կիսելի նման համեղ ուտելիք են պատրաստում:

Բացի Ը վիտամինից, այս խմելիքը պարունակում է նաև կապող նյութեր, այդ պատճառով էլ լավ միջոց է հանգիսանում լուծը բռնժելու համար: Մասուրը պարունակում է նաև կարոտին, որը մարդու օրգանիզմում վեր է ածվում Ա վիտամինի:

Մասուրով և նրանից պատրաստված պրեպարատներով բռնժումը վերջին տարիներում ոչ միայն տնական միջոց է հանգիսանում, այլև լայն տեղ է բռնում հիվանդանոցներում: Այդտեղ մասուրով բռնժում են ոչ միայն օրգանիզմի ընդհանուր թուլությունը, այլև գրա հետեւանքով առաջացած մի շաբթ ինֆեկցիոն հիվանդություններ: Մասուրը մեծ հաջողությամբ կիրառվում է զանազան թարախային պրոցեսներ, ինչպես նաև ցինդան և այլ հիվանդություններ բռնժելիս:

* * *

Մասուր հավաքելը միայն բավական չէ, անհրաժեշտ է նաև ավելացնել նրա պաշարները: Մասրենիները, մանավանդ նրանց տեղական տեսակները, շատ քիչ պահանջկոտ բռնյեր են, որոնց մշակությունը շատ ավելի հեշտ է, քան կուլտուրական վարդենիների մշակությունը: Բաղդացման ամենահեշտ և արագ միջոցը կտրոններով անեցնելն է:

Սովորական մասրենիները նպատակահարմար է մշակել ոչ թե հատուկ, թանգ արժեցող հողամասերում, այլ այնտեղ, որտեղ արհրաժեշտ է լինում մեծ տարածություններով թփեր անկեր, ինչպես, օրինակ, կենդանի ցանկապատեր և այլն:

Այս միջոցառությունները խոշոր ծախքեր չեն պահանջում, մինչդեռ մեծ չափով ավելացնում են մասուրի պաշարը մեր երկրում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ի՞նչ է վիտամինը	3
Վիտամինների տեսակները	4
Մասրենին, նրա տարածումը, մասուրի հավաքելը	7
Մասուրի պահպանումը	10
Մասուրի օգտագործումը	11

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՊՈՊՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ

Լույս են տեսել

1.	Ա. Խաչատրյան—Բանջարանոցային բույսերի աճեցումը Երևանի պայմաններում	10 ռ.
2.	Տ. Ա. Տեր-Մահակյան—Կարսոնֆելի կուլտուրան Արտօնատյան գաշտավայրում	6 ռ.
3.	Ա. Ա. Ռամբայելյան—Կորեկտ	1 ռ. 50 կ.
4.	Հ. Ա. Բադայյան—Ինչպես որոշել քանի օրական է կուսինը	5 ռ. 50 կ.
5.	Ա. Գ. Արտրատյան—Անտառայգիներ	2 ռ. 50 կ.
6.	Ա. Ա. Ռաֆայելյան—Եղիպտացորեն	1 ռ. 50 կ.
7.	Գ. Գ. Յարոշենկո—Զեմ և պտառեղ՝ անտառային հոնից: Յուղամի մածուկ հաճարենու պառզներից	3 ռ.
8.	Գ. Գ. Յարոշենկո—Մասուրը որպես վիտամինի հարուստ աղբյուր 3 ռ.	

АРИЯНСКИЙ ФИЛИАЛ АКАДЕМИИ НАУК СССР

БОТАНИЧЕСКИЙ ИНСТИТУТ

Естественно-научная популярная серия

П. Д. ЯРОШЕНКО

Шиповник как богатый источник витамина

Издание Армфар. Ереван, 1943 г.

Գ.Ֆ. 02859.

պատվեր № 322.

հրատ. 195.

միջուկ 1200.

ԼԺԿ-ի Գիտամանկավարժ. հրատ. ապարան. Երևան, Արտգյուղ 106

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010549

A — II
16011

ԳԻԱԸ Յ Ա. 304.